

Պաշտոն: Հեռախոսազանգերի կենտրոնի Վաճառքի խմբի առաջատար մասնագետ

Աշխատանքի վայր: Երևան, Հայաստան

Աշխատանքային գրաֆիկ: 8 ժամյա աշխատանքային օր երկու հերթափոխով՝ աշխատանքային ժամերը՝ 10:00-19:00, 11:00-20:00

Աշխատանքի նկարագիր

Անելիք բանկը փնտրում է նպատակասլաց, ակտիվ, ճկուն և խելացի անձանց Հեռախոսազանգերի կենտրոնի Վաճառքի խմբում աշխատելու համար: Աշխատակիցը պատասխանատու է լինելու ելքային զանգերով վաճառքների և առցանց հայտերի սպասարկման համար:

Աշխատանքային պարտականություններ

- Ելքային զանգերի միջոցով բանկի ծառայությունների գովազդում
- վաճառքների, խաչաձև վաճառքների իրականացում
- Ելքային զանգերի միջոցով բանկի և պրոդուկտների վերաբերյալ հարցումների իրականացում
- Առցանց վարկային հայտերի ընդունում
- Առցանց վճարային քարտերի հայտերի ընդունում

Պահանջվող որակավորումներ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 1 տարվա աշխատանքային փորձ հեռախոսազանգերի կենտրոնում, վաճառքի ոլորտում, բանկային կամ հարակից ոլորտներում
- Համակարգչային գիտելիքների իմացություն
- Հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուների գերազանց իմացություն
- Սովորելու, արագ կողմնորոշվելու ունակություն
- Լարված աշխատելու կարողություն
- Բանավոր և գրավոր խոսքի գերազանց տիրապետում
- Թիմային աշխատանքի պատրաստակամություն
- Հաղորդակցման հմտություններ
- Խաչաձև վաճառքի հմտություններ

Չայտերի ընդունման վերջնաժամկետ: 20.11.2017

Դիմելու ընթացակարգ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Անելիք Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@anelik.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ (subject) վերնագիր տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը:
Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները: